

ԿԱՅԱՑԵԼ Է ՓԱՍՏԱՔԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՎՈԼԵՅԲՈՒԼԻ ՄՐՑԱՇԱՐԸ

10.04.2017 12:10



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբի նախաձեռնությամբ ապրիլի 8-ին իրականացվել է Փաստաբանների պալատի վոլեյբոլի մրցաշար: Փաստաբանական համայնքի ներկայացուցիչներն և ապագա փաստաբաններն իրենց ուժերն են փորձել այդ սպորտաձևում: Պրոֆեսիոնալ մրցավարի օգնությամբ որոշվել են առաջինից երրորդ մրցանակային տեղերը: Մրցաշարում երրորդ տեղ է գրավել «Վիկտորիա» թիմը, որի կազմում էին փաստաբաններ Դավիթ Ազիզյանը, Մուրադ Ասրյանը, Արմեն Օհանյանը, Մնացական Մելիքյանը, Վրեժ Խաչիկյանը և Սոնա Սահակյանը: Մրցանակային երկրորդ տեղը զբաղեցրել է Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոցի թիմը, որի կազմում էին ունկնդիրներ Ֆերդինանդ Սարգսյանը, Պետիկ Սարգսյանը, Հարոն Ակունցը, Նելլի Մինասյանը, Դավիթ Արղամանյանը, Հռիփսիմե Պապիկյանը: Փաստաբանների պալատի վոլեյբոլի մրցաշարի առաջնության հաղթող է ճանաչվել «Արգունենտում» թիմը, որի կազմում էին փաստաբաններ Գիվի Հովհաննիսյանը, Ալբերտ Կանդալյանը, Բակուր Օհանյանը, Գարիկ Մալխասյանը և Տիգրան Սիմոնյանը:









```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```